ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ

«Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին»

2020-2022
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ԵՎ 2020
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Երևան - 2019թ.

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հավատարմագրման ոլորտի վերջին տարիների զարգացման միտումները պայմանավորված են Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովումով: Անհրաժեշտություն էր առաջացել իրականացնել բարեփոխումներ որակի ենթակառուցվածքների բնագավառում, ՀՀ օրենսդրական դաշտը մոտարկել ԵՄ օրենսդրական դաշտին և ապահովել հավատարմագրման ազգային մարմնի գործունեությունը միջազգային ու եվրոպական պահանջներին համապատասխան:

2017 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. PTB գերմանական չափագիտության ինստիտուտի կողմից կազմակերպված «Աջակցություն որակի ենթակառուցվածքին» ծրագրի շրջանակում հավատարմագրման միջազգային փորձագետը 2 այցով ժամանել է ՀԱՄ, որի ընթացքում իրականացրել է ՀԱՄ-ում ներդրված կառավարման համակարգի մոնիթորինգ և առաջարկություններ ներկայացրել «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքում, ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի «Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման կարգ»-ը N 1201-Ն որոշման մեջ, ինչպես նաև դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ կատարել՝ դրանք համապատասխանեցնելով եվրոպական օրենսդրությանը (REGULATION (EC) No 765/2008), ինչպես նաև վերանայել կառավարման համակարգի մի շարք փաստաթղթեր՝ դրանք համապատասխանեցնելով եվրոպական (EA), միջազգային (IAF, ILAC) կազմակերպությունների կողմից մշակված հավատարմագրման փաստաթղթերին:

2. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են՝

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական միջոցառումների իրականացման խորհրդատվական կոմիտեին կից տեխնիկական կարգավորման և համապատասխանության գնահատման ենթակոմիտեների աշխատանքներին, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին, տեսակոնֆերանսներին, որոնց ընթացքում քննարկվել են ԵԱՏՄ տեխնիկական

կանոնակարգերը, համապատասխանության գնահատման տիպային սխեմաները և ԵԱՏՄ այլ որոշումների նախագծեր,

- Միջպետական Խորհրդի (ՄՊԽ) հավատարմագրման հարցերով գիտատեխնիկական հանձնաժողովների, հավատարմագրման տարածաշրջանային կազմակերպության ստեղծման հարցերով աշխատանքային խմբերի աշխատանքներին,

- Հավատարմագրման Եվրոպական Համագործակցության Լաբորատորիաների Կոմիտեի 33-րդ Ժողովին,

- Մոսկվայում կազմակերպված Եվրասիական տնտեսության միության հավատարմագրման ազգային մարմինների ղեկավարների նիստի աշխատանքներին,

- Քիշնևում կազմակերպված Հավատարմագրման տարածաշրջանային կազմակերպության ստեղծման հարցերով ՄՊԽ Աշխատանքային խմբի 7-րդ, հավատարմագրման և համապատասխանության գնահատման հարցերով գիտատեխնիկական հանձնաժողովների 40-րդ նիստերի աշխատանքներին:

3. Ի կատարումն ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 1-ի նիստի 29/7[407904]-17 N 23 արձանագրության հանձնարարականի 1-ին կետի՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում կազմակերպվել է ՀՀ փորձարկման լաբորատորիաների ներկայացուցիչների հետ հանդիպում, համաձայն 2-րդ կետի՝ ՀԱՄ-ն իրականացվել է ՀՀ-ում հավատարմագրված ընդհանուր թվով 37 փորձարկման լաբորատորիաների արտահերթ գնահատումներ, որոնց արդյունքները ներկայացվել են ՀՀ կառավարություն:

4. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը հավատարմագրված և հավատարմագրմանը հավակնող փորձարկման լաբորատորիաների մասնագետների համար կազմակերպել է «ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտով սահմանված տեխնիկական պահանջները» թեմայով որակավորման դասընթաց: Դասընթացին մասնակցել են 24 կազմակերպություններից ընդհանուր թվով 41 ներկայացուցիչ և ստացել վերապատրաստման վկայագրեր, ինչպես նաև որակավորման գործընթաց, որին մասնակցել են 19 կազմակերպություններից ընդհանուր թվով 34 ներկայացուցիչ և ստացել որակավորման վկայագրեր:

5. Իրականացվել է ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N 1301-Ն որոշմամբ սահմանված Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության սերտիֆիկատի միասնական ձևին համապատասխան՝

համապատասխանության սերտիֆիկատների բլանկների, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017թ. ապրիլի 27-ի N 397-Ն հրամանով սահմանված պետական գրանցման վկայականների տպագրությունը և տրամադրումը համապատասխանության գնահատման մարմիններին:

6. Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացման նպատակով՝

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի միասնական ռեեստրներում ներառվել են՝

1) 5122 համապատասխանության հայտարարագիր,

2) 372 համապատասխանության սերտիֆիկատ:

Փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) և սերտիֆիկացման մարմինների ԵԱՏՄ միասնական ռեեստրում ներառվել են՝

1) 8 փորձարկման լաբորատորիա,

2) 7 սերտիֆիկացման մարմին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ· մայիսի 21-ի N 552-Ն որոշումը, վարվել է ՀՀ տեխնիկական կանոնակարգերին համապատասխան համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրը, մասնավորապես ներառվել է՝

1) 977 համապատասխանության հայտարարագիր,

2) 111 համապատասխանության սերտիֆիկատ:

Ազգային ռեեստրում ներառվել են՝

1) 19 փորձարկման լաբորատորիա,

2) 1 տրամաչափարկման լաբորատորիա,

3) 10 արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

4) 2 կառավարման համակարգի սերտիֆիկացման մարմին,

5) 1 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին:

2017 թվականին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից հավատարմագրվել են 19 փորձարկման լաբորատորիա, 1 տրամաչափարկման լաբորատորիա, 12 սերտիֆիկացման մարմին և 1 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին:

2018 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը մշակել և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն է ներկայացրել «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2. ՀԱՄ-ի ներկայացուցիչները մասնակցել են «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ ՏՀ 21 «Համապատասխանության գնահատում և կառավարման համակարգեր» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի աշխատանքներին, որի ընթացքում մշակվել և քննարկվել են ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011, ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025 ստանդարտների նախագծերը.

3. Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են՝

- Գերմանիայի չափագիտության ազգային ինստիտուտի (PTB) կողմից Թբիլիսիում կազմակերպված «Աջակցություն որակի ենթակառուցվածքի ոլորտում Արևելյան գործընկերության պետությունների տարածաշրջանային համագործակցությանը» աշխատաժողովին և Կիևում կազմակերպված ԻՍՕ/ԻԷԿ 17011:2017, ԻՍՕ/ԻԷԿ 17025:2017 միջազգային նոր ստանդարտների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին և ստացել սերտիֆիկատներ,

- Մոսկվայում կազմակերպված Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հավատարմագրման, համապատասխանության գնահատման համակարգերի արդյունավետ համագործակցության նպատակով կազմակերպված խորհրդակցությանը,

- Բուխարեստում կազմակերպված Հավատարմագրման Եվրոպական Համագործակցության 42-րդ Գագաթնաժողովին,

- Մինսկում կազմակերպված Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների Հավատարմագրման Մարմինների Ղեկավարների Խորհրդի 1-ին նիստին,

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական միջոցառումների իրականացման խորհրդատվական կոմիտեին կից տեխնիկական կարգավորման և համապատասխանության գնահատման ենթակոմիտեների աշխատանքներին, ինչպես

նաև ԵԱՏՄ Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին, տեսակոնֆերանսներին, որոնց ընթացքում քննարկվել են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը, համապատասխանության գնահատման տիպային սխեմաները և ԵԱՏՄ այլ որոշումների նախագծեր:

4. Իրականացվել է ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N 1301-Ն որոշմամբ սահմանված Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության սերտիֆիկատի միասնական ձևին համապատասխան՝ համապատասխանության սերտիֆիկատների բլանկների տպագրությունը և տրամադրումը համապատասխանության գնահատման մարմիններին:

5. Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) պայմանագրով նախատեսված պարտավորությունների իրականացման նպատակով՝

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի միասնական ռեեստրներում ներառվել են՝

1) 6390 համապատասխանության հայտարարագիր,

2) 627 համապատասխանության սերտիֆիկատ:

Փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) և սերտիֆիկացման մարմինների ԵԱՏՄ միասնական ռեեստրում ներառվել են՝

1) 1 արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

2) 8 փորձարկման լաբորատորիա:

6. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ· մայիսի 21-ի N 552-Ն որոշումը՝ վարվել է ՀՀ տեխնիկական կանոնակարգերին համապատասխան համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրը, մասնավորապես ներառվել է՝

1) 492 համապատասխանության հայտարարագիր,

2) 66 համապատասխանության սերտիֆիկատ:

7. Ազգային ռեեստրում ներառվել են՝

1) 1 արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

2) 12 փորձարկման լաբորատորիա,

3) 1 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին,

4) 1 ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին:

8. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը հավատարմագրված և հավատարմագրմանը հավակնող փորձարկման լաբորատորիաների մասնագետների համար կազմակերպել է ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտի հիմնական պահանջների վերաբերյալ վերապատրաստման դասընթաց: Դասընթացին մասնակցել են 12 կազմակերպություններից ընդհանուր թվով 24 ներկայացուցիչներ և ստացել են վկայագրեր:

Իրականացրել է որակավորման գործընթացի կազմակերպում՝ թեստավորում և հարցազրույց, որին մասնակցել են 5 կազմակերպություններից ընդհանուր թվով 7 ներկայացուցիչներ և տրամադրել որակավորման վկայագրեր:

9. 2018 թվականին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից

- հավատարմագրվել են 12 փորձարկման լաբորատորիա, 1 արտադրանքի, 1 կառավարման համակարգերի, 1 ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմիններ, 2 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին,

- դադարեցվել են հավատարմագրված 5 փորձարկման լաբորատորիաների և 2 արտադրանքի սերտիֆիկացման մարմինների գործունեությունը,

- մինչև 4 ամիս ժամկետով կասեցվել են հավատարմագրված 1 տրամաչափարկման և 1 փորձարկման լաբորատորիաների հավատարմագրումը,

- դադարեցվել են արտադրանքի սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման ընդլայնման և 1 փորձարկման լաբորատորիայի հավատարմագրման գործընթացը,

- մերժվել է 2 փորձարկման լաբորատորիայի հավատարմագրումը:

2017-2018թթ. կատարված փաստացի ֆինանսական ծախսերն են.

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՐԻ՝ 13900,0 հազար դրամ, որն ուղղված է եղել 5 աշխատակցի (4 աշխատակցինը ամբողջությամբ, 1 աշխատակցինը՝ մասամբ) աշխատավարձի ֆոնդին:

2019թ. նախատեսվող ֆինանսական ծախսերը (01.01.19 – 31.12.19)

16680,0 հազար դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), որն ուղղված կլինի 5 աշխատակցի (4 աշխատակցինը ամբողջությամբ, 1 աշխատակցինը՝ մասամբ) աշխատավարձի ֆոնդին:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ծրագրի իրականացումը կապված է ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերում ամրագրված ընդհանուր տնտեսական խնդիրների և նպատակների հետ:

Ծրագրի իրականացման հիմնական նպատակներն են՝

- Միջազգային, եվրոպական, Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) չափանիշներին համապատասխան հավատարմագրման ազգային համակարգի ձևավորումը, միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան համապատասխանության գնահատման մարմինների (փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաներ, արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմիններ, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմիններ) հավատարմագրումը, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆի-կատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրների ձևավորումը, վարումը և արդիականացումը:

Միջազգային, եվրոպական, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ-պետությունների հավատարմագրման համակարգերին ինտեգրումը նախադրյալներ կստեղծի առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը, ապրանքների ազատ տեղաշարժի ապահովմանը, նույն ապրանքի կրկնական փորձարկման և կրկնական սերտիֆիկացման բացառմանը:

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ոլորտային քաղաքականության նպատակների և թիրախների ապահովման համար ՄԺԾԾ ժամանակահատվածում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին տրամադրվող գումարն ուղղվում է 5 աշխատակցի (4 աշխատակցինը ամբողջությամբ, 1 աշխատակցինը՝ մասամբ) աշխատավարձի ֆոնդին:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	Միջազգային, եվրոպական, Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) չափանիշներին համապատասխան հավատարմագրման ազգային համակարգի ձևավորում, միջազգային ստանդարտների պահանջներին

	համապատասխան համապատասխանության գնահատման մարմինների (փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաներ, արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմիններ, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմիններ և այլ համապատասխանության գնահատման մարմիններ) հավատարմագրում, ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրների ձևավորում, վարում և արդիականացում, ազգային մարմնի մասնակցություն աշխատաժողովներին, գագաթնաժողովներին, հանդիպումներին

Ի լրումն վերոհիշյալ տեղեկատվության՝ ՄԺԾԾ հատվածում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառի գծով կառավարության ծախսային քաղաքականության հակիրճ շարադրանքը ներկայացված է սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 12-ի ձևաչափին համապատասխան (տե՛ս ՄԱՍ 3-ի հավելված 12-ը):

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող աշխատանքներն ֆինանսավորվում են համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին» հոդվածի համաձայն: Ծրագրով նախատեսվող ֆինանսավորման չափը կազմում է 16680,0 հազար դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), որն ուղղվում է աշխատողների աշխատավարձին և դրան հավասարեցված վճարներին:

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					

1067	11002	Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը ապահովում է հավատարմագրման գործընթացի իրականացումը, մասնավորապես՝ ընդունում, գրանցում է հավատարմագրման հայտը, իրականացնում է հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այսուհետ՝ ՀԳՄ) կողմից ներկայացված հավատարմագրման փաստաթղթերի փորձաքննություն, գնահատում՝ ըստ ՀԳՄ-ի գտնվելու վայրի, հրավիրում է հավատարմագրման խորհրդի նիստը, կազմակերպում է տեխնիկական կոմիտեների աշխատանքները, որի արդյունքում ընդունվում է որոշում ՀԳՄ-ին հավատարմագրելու, հավատարմագրումը մերժելու, հավատարմագրման ոլորտը ընդլայնելու, կրճատելու, հավատարմագրման վկայագրի գործողությունը կասեցնելու, վերականգնելու, դադարեցնելու վերաբերյալ, ձևակերպում, գրանցում է հավատարմագրման վկայագիրը, ապահովում է հավատարմագրված ՀԳՄ-ների պարբերական գնահատման իրականացումը, վարում է հավատարմագրված ՀԳՄ-ների և հավատարմագրման գործընթացում ընդգրկված գնահատողների ու փորձագետների, հավատարմագրված ՀԳՄ-ների և ՀՀ ու ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրները, իրականացնում է եվրոպական, ԵԱՏՄ պայմանագրերով ամրագրված պարտավորությունները, մասնակցում է աշխատաժողովներին, գագաթնաժողովներին, հանդիպումներին: Հավատարմագրման շահառուներ են հանդիսանում փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաներ, արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, անձանց սերտիֆիկացման մարմիններ, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմիններ, ապրանք արտադրողներ, իրացնողներ և ներմուծողներ, սպառողներ, ծառայություններ մատուցողներ, մաքսային մարմիններ, պետական կառավարման մարմիններ	Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում, պարբերական, արտահերթ գնահատում, հավատարմագրված ՀԳՄ-ների, հավատարմագրման փորձագետների (գնահատողների), ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրների վարում, եվրոպական, միջազգային և ԵԱՏՄ պայմանագրերով ամրագրված պարտավորությունների իրականացնում	«Հավատարմագրման մասին» ՀՕ-20-Ն ՀՀ օրենք, ՀՀ «Եվրասիական տնտեսական միության մասին» Պայմանագիր և դրանից բխող որոշումներ
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
			Վերը նշված միջոցառումները կրում են շարունակական բնույթ:	Վերը նշված միջոցառումները կրում են շարունակական բնույթ:	
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝					

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Հավատարմագրումը հանրային շահերը ներկայացնող ծառայություն է, որը նպաստում է առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը, համապատասխանության գնահատման գործունեության արդյունքների նկատմամբ սպառողների վստահության բարձրացմանը, նախադրյալներ է ստեղծում շուկա մուտք գործող ապրանքների և ծառայությունների բարձր որակի ապահովման համար:

«Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմիններին (փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաներ, արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, անձանց սերտիֆիկացման մարմիններ, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմիններ և այլն) հավատարմագրող միակ մարմինը «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ն է, որը ստեղծվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. հուլիսի 19-ի N 890-Ն որոշմամբ՝ իր գործունեությունը սկսել է 2012թ. դեկտեմբերից:

Իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը ապահովում է հավատարմագրման գործընթացի իրականացումը, մասնավորապես՝

- ընդունում, գրանցում է հավատարմագրման հայտը,
- իրականացնում է հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (համապատասխանության գնահատման մարմինների, այսուհետ՝ ՀԳՄ) կողմից ներկայացված հավատարմագրման փաստաթղթերի փորձաքննություն,
- իրականացնում է գնահատում՝ ըստ ՀԳՄ-ի ըստ գործունեության իրականացման վայրի,
- կազմակերպում է տեխնիկական կոմիտեների աշխատանքները, որի արդյունքում ընդունվում են որոշումներ ՀԳՄ-ին հավատարմագրելու, հավատարմագրումը մերժելու, հավատարմագրման ոլորտը ընդլայնելու, կրճատելու, հավատարմագրման վկայագրի գործողությունը կասեցնելու, վերականգնելու, դադարեցնելու վերաբերյալ:
- կազմակերպում է հավատարմագրման խորհրդի նիստերը,
- ձևակերպում, գրանցում է հավատարմագրման վկայագիրը,
- ապահովում է հավատարմագրված ՀԳՄ-ների պարբերական և արտահերթ գնահատման իրականացումը,
- ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների, հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ու տեխնիկական փորձագետների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված

համապատասխանության հայտարարագրերի ռեեստրների ձևավորումը և վարումը, նշված ռեեստրներից տեղեկատվության տրամադրումը,

- կազմակերպում է հավատարմագրման վերաբերյալ գիտաժողովներ, վերապատրաստման և որակավորման դասընթացներ և շնորհում համապատասխան վկայագրեր,
- հավատարմագրման բնագավառում տարածաշրջանային և միջազգային համագործակցության շրջանակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը և մասնակցում է հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների աշխատանքներին,
- կազմակերպում է համապատասխանության սերտիֆիկատների, պետական գրանցման վկայականների բլանկների տպագրությունը և դրանք համապատասխանության գնահատման մարմիններին տրամադրումն ու հաշվառումը,
- իր իրավասության սահմաններում կնքում է համագործակցության և համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման երկկողմանի և բազմակողմ փոխադարձ ճանաչման համաձայնագրեր:

Արդյունքում ՀԳՄ-ների կողմից մատուցվող ծառայությունները համապատասխանում են տարածաշրջանային և միջազգային ստանդարտներով, տեխնիկական կանոնակարգերով և այլ փաստաթղթերով սահմանված պահանջներին:

1) «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը 2016 թվականի նոյեմբերի 24-ից հանդիսանում է Հավատարմագրման եվրոպական համագործակցության (EA)-ի ասոցացված անդամ և այդ անդամակցության շրջանակում մասնակցում է աշխատաժողովներին, գագաթնաժողովներին:

2) ԵԱՏՄ շրջանակում հավատարմագրման համագործակցությունն **իրականացվում է ԵԱՏՄ Պայմանագրի** հիման վրա՝

- «Տեխնիկական կանոնակարգում» X-րդ բաժնի 54-րդ հոդված «Հավատարմագրում»,
- № 9 հավելված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին արձանագրություն»,
- № 10 հավելված «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին արձանագFրություն»,
- № 11 հավելված «Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքները ճանաչելու մասին արձանագրություն»:

3) Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները հանդիսանում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական միջոցների Տեխնիկական կանոնակարգման Խորհրդատվական կոմիտեի տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ենթակոմիտե» **աշխատանքային խմբի անդամներ**:

4) «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենը հանդիսանում է Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների Հավատարմագրման Մարմինների Ղեկավարների **Խորհրդի նախագահ**:

5) «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը, որպես Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային մարմին, մասնակցում է ՄՊԽ-ի հետևյալ գիտատեխնիկական հանձնաժողովի և աշխատանքային խմբի աշխատանքներին՝

- հավատարմագրման գիտատեխնիկական հանձնաժողով (ՀՏԿԱ),
- հավատարմագրման տարածաշրջանային կազմակերպության ստեղծման աշխատանքային խումբ (ՐԳ ՐՕԱ):

6) Կազմակերպությունը ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1313-Ն և 05.02.2015թ. N 86-Ա որոշումներով նշանակվել է համապատասխանաբար՝ սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Եվրասիական տնտեսական միության (մաքսային միության) միասնական ռեեստրի ազգային մասի ձևավորումն ու վարումն իրականացնող և Եվրասիական տնտեսական միության (մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասի ձևավորումն ու վարումն իրականացնող լիազոր մարմին:

Ներկայումս ՀԱՄ-ն իրականացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016թ. մայիսի 10-ի N 38 և N 39 որոշումներով հաստատված տեխնոլոգիական փաստաթղթերին համապատասխան N 36 և N 35 ընդհանուր գործընթացներին միանալու աշխատանքներ, որոնք ուղղված են սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների), համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի միասնական ռեեստրների արտաքին և փոխադարձ առևտրի միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմանն:

Արդյունքում Հավատարմագրման ազգային մարմինն ապահովում է ՀՀ օրենսդրությամբ, ԻՍՕ/ԻԷԿ 17011 միջազգային ստանդարտով և ԵԱՏՄ Պայմանագրով ամրագրված պարտավորությունները:

Գոյություն ունեցող ծրագրի/միջոցառման (ծախսային պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքներն ամփոփ տեսքով ներկայացված են սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 3-ի ձևաչափին համապատասխան:

Նշված ծրագրի/միջոցառման գծով ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների ներկայացված են սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելվածներ 4-ի և 5-ի ձևաչափերին համապատասխան:

4.3. Նոր նախաձեռնությունները

Նոր նախաձեռնությունների բացակայության պատճառով համապատասխան աղյուսակները չեն լրացվում:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից 2020-2022թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացվող եկամուտների աղբյուրներն են՝

- հավատարմագրման ծառայություններից ստացված միջոցները,
- վերապատրաստման, որակավորման դասընթացներից ստացված միջոցները,
- համապատասխանության սերտիֆիկատների, պետական գրանցման վկայականների բլանկների վաճառքից ստացված միջոցները:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր/միջոցառումներ չեն կանխատեսվում, ուստի համապատասխան աղյուսակները չեն լրացվում:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր չեն նախատեսվում, ուստի համապատասխան աղյուսակները չեն լրացվում:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2020-2022թթ. ժամանակահատվածի համար ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ՄԱՍ 4-ի հավելված 10-ում՝ աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

9. ՄԺԾԾ ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

N	Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները
1.	Հաշվի առնելով տնտեսության զարգացվածության մակարդակը հավատարմագրման նպատակով հայտերի սակավություն կամ բացակայություն, ինչն իր հերթին ազդում է Հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսական վիճակի վրա	3	Հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսական վիճակի վատթարացում	Տնտեսական աճի անկում

ՄԱՍ 3. ՄԺԾԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափ[1]

Ծրագիրը՝	**1067 - Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում**
Միջոցառումը՝	**11002 - Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին**
Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝	**Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում**

Աղյուսակ 1. Ծախսերի վրա ազդող ծախսային գործոնները

Ծախսային գործոնը և սպառվող (ծախսվող) ռեսուրսը	Գործոնի տեսակը	Չափի միավորը	Ստանդարտի (նորմատիվի) առկայությունը	Գործոնի կամ ռեսուրսի սպառման (ծախսման) մակարդակը					Հիմնավորումներ/Պատճառներ
				2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	
Գնային և ոչ գնային գործոններ՝									
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	գնային գործոն	1000 դրամ	Ոչ	13900.0	16680.0	16680.0	16680.0	16680.0	Աշխատավարձի աճը պայմանավորված է ԱԱՀ գումարմամբ
.....									
Սպառվող ռեսուրսներ՝									
.....									

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի անվանումը	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները
Նպատակները Միջազգային, եվրոպական, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ-պետությունների հավատարմագրման համակարգերի ինտեգրում՝ այդ թվում հավատարմագրման արդյունքների փոխադարձ ճանաչում, միջազգային, տարածաշրջանային պահանջներին համապատասխան համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում, ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրների վարում, եվրոպական, ԵԱՏՄ պայմանագրերով ամրագրված պարտավորությունների իրականացում: ***Արդյունքները*** Հավատարմագրումը հանրային շահերը ներկայացնող ծառայություն է և նպաստում է առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը, համապատասխանության գնահատման գործունեության արդյունքների նկատմամբ սպառողների վստահության բարձրացմանը, նախադրյալներ է ստեղծում շուկա մուտք գործող ապրանքների և ծառայությունների բարձր որակի ապահովման համար: Արդյունքում ՀԳՄ-ների կողմից մատուցվող ծառայությունները համապատասխանում են տարածաշրջանային և միջազգային ստանդարտներով, տեխնիկական կանոնակարգերով և այլ փաստաթղթերով սահմանված պահանջներին: Նշված ռեեստրների վարման արդյունքում ապահովվում է տեղեկատվության հանրամատչելիությունը հանրությանը, այդ թվում՝ շահագրգիռ մարմիններին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, ԻՍՕ/ԻԷԿ 17011 միջազգային ստանդարտով և ԵԱՏՄ Պայմանագրով ամրագրված պարտավորությունները: Հավատարմագրման արդյունքների փոխադարձ ճանաչման արդյունքում կկրճատվի թե՛ արտադրողի և թե՛ ներմուծողի ծախսերը, քանի որ այն կրճատում կամ վերացնում է արտադրանքի (ծառայության)՝ մյուս երկրում վերագնահատման անհրաժեշտությունը, կնպաստի ապրանքների ազատ տեղաշարժին և տնտեսության զարգացմանը:
2. Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները
Բյուջետային ծրագրերում փոփոխություններ չեն կատարվել:
3.Կապիտալ բնույթի հիմնական միջոցառումները
-
4. Ֆինանսական ակտիվների կառավարմանն անչվող միջոցառումները՝
-

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՄԱՍ 4. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը
1067	**Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում**

Ծրագրի միջոցառումները

Ծրագրի դասիչը՝	1067	Ցուցանիշներ					
Միջոցառման դասիչը՝	11002	2018թ. փաստ.	2019 սպասվող	2020թ	2021թ	2022թ	*<Միջոցառման ավարտի տարեթիվը>*
Միջոցառման անվանումը՝	Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին						
Նկարագրությունը՝	Հավատարմագրման ծառայությունների մատուցում, հավատարմագրման համակարգի բարեփոխում և ազգային մարմնի կայացում, հավատարմագրման գործընթացում ընդգրկված անձնակազմի ուսուցում միջազգային չափանիշներին համապատասխան, հավատարմագրման ազգային մարմնի պաշտոնական կայքէջի և ռեեստրների սպասարկում, արդիականացում, հավատարմագրման ազգային մարմնի մասնակցություն աշխատաժողովներին, գագաթնաժողովներին, հանդիպումներին և այլն						
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում						
Միջոցառումն իրականացնողի անվանումը>՝	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ						
Արդյունքի չափորոշիչներ							
<Լրացնել արդյունքի չափորոշիչի տեսակը>	*<Լրացնել արդյունքի չափորոշիչի անվանումը և չափման միավորը>*						
Քանակական	Սերտիֆիկացման մարմինների հավատարմագրում	3	5	6	8	8	
	Լաբորատորիաների հավատարմագրում	12	9	10	10	11	
	Տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների հավատարմագրում	2	1	-	1	1	

Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		13900.0	16680.0	16680.0	16680.0	16680.0	Շարունակա-կան

ՄԱՍ 3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամ-կետը	Ցուցանիշը	Ժամ-կետը	
Միջազգային, եվրոպական, միջպետա-կան չափանիշներին համապատասխան հավատարմագրման ազգային համակարգի ձևավորումը, միջազգային ստանդարտների պահանջներին համա-պատասխան համապատասխանության գնահատման մարմինների հավատար-մագրումը, ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատ-ների և գրանցված համապատասխանու-թյան հայտարարագրերի, հավատար-մագրված համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրների ձևավորումը, վարումը և արդիականա-ցումը	*1067* Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	Փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաներ, արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմիններ, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների հավատարմագրում	17	2018	16	2020	ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրի «5.5. ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԻՉ»

Հավելված N 4. Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

Ծրագրային դասիչը	Ծրագիր /Միջոցառում	2018թ փաստ. (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ բյուջե (հազ. դրամ	2021թ բյուջե (հազ. դրամ)	2022 թ բյուջե (հազ. դրամ)

			Ընդամենը	Աշխատակազմի և դրան հավասարեցված վճարների	Ընդամենը	Աշխատակազմի և դրան հավասարեցված վճարների	Ընդամենը	Աշխատակազմի և դրան հավասարեցված վճարների	Ընդամենը	Աշխատակազմի և դրան հավասարեցված վճարների	Ընդամենը	Աշխատակազմի և դրան հավասարեցված վճարների
1067		Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում										
	11002	Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին	13900.0	13900.0	16680.0	16680.0	16680.0	16680.0	16680.0	16680.0	16680.0	16680.0

Հավելված N 5. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	Գործառական դասակարգման			2018թ փաստ. (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ բյուջե (հազ. դրամ)	2021թ բյուջե (հազ. դրամ)	2022 թ բյուջե (հազ. դրամ)
			Բաժին	Խումբ	Դաս					
1067		Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	X	X	X					
	11002	Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին	04	01	01	13900.0	16680.0	16680.0	16680.0	16680.0

Հավելված N 7. Պետական մարմնի և դրա ենթակա կազմակերպությունների ստացվելիք եկամուտների աղբ-յուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

(հազար դրամներով)

Եկամուտների ստացման աղբյուրների անվանումները	Փաստացի ըստ 2018 թվականի տարեկան հաշվետվության	2019 թվականի սպասողական	Կանխատեսում		
			2020թ.	2021թ.	2022թ.
ԸՆԴԱՄԵՆԸ					
այդ թվում՝					
1. Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից					
1.1 հավատարմագրման ծառայություններից, գնահատումներից և տարեկան անդամավճարներից ստացված միջոցներ	54239.0	58587.5	60000.0	62000.0	63000.0
1.2 վերապատրաստման, որակավորման դասընթացներից ստացված միջոցներ	1440.0	980.0	1480.0	1500.0	1520.0
1.3 համապատասխանության սերտիֆիկատների, պետական գրանցման բլանկների վաճառքից ստացված	1788.5	2000.0	2100.0	2200.0	2300.0

միջոցներ					
2. Ստացվող նվիրատվություններից	Բացակայում են				

Հավելված N 10. Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար

Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2020-2022թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2019-2021թթ. ՄԺԾԾ հետ

(հազար դրամներով)

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1. Պետական մարմնի գծով 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները	X	16680.0	16680.0	16680.0
2. <<ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով պետական մարմնի գծով սահմանված ընդհանուր հատկացումները	16680.0	X	X	X
3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.)	X	16680.0	16680.0	16680.0
3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման)	X	16680.0	16680.0	16680.0
3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով	X			
3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	X			
4. Տարբերությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3 - տող 2)	X	16680.0	16680.0	16680.0
5. Տարբերությունը 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1)	X	0.0	0.0	0.0

Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

Հավատարմագրման ոլորտը հանդիսանալով որակի ենթակառուցվածքի համակարգի բաղկացուցիչ մաս՝ էական ազդեցություն ունի Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման վրա: Հավատարմագրումը հանրային շահերը ներկայացնող ծառայություն է և նպաստում է առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը, համապատասխանության գնահատման գործունեության արդյունքների նկատմամբ սպառողների վստահության բարձրացմանը, նախադրյալներ է ստեղծում շուկա մուտք գործող ապրանքների և ծառայությունների բարձր որակի ապահովման համար:

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 19-ի N 890-Ն որոշմամբ՝ հիմք ընդունելով «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, և հանդիսանում է ՀՀ կառավարության կողմից բացառիկ լիազորություններ ստացած Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմիններին (փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաներ, արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, անձանց սերտիֆիկացման մարմիններ, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմիններ և այլ համապատասխանության գնահատման մարմիններ) հավատարմագրող միակ մարմինը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության «Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման, «Եվրասիական տնտեսական միության մասին» Պայմանագրի և այլ իրավական ակտերի, ինչպես նաև ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի պահանջներին համապատասխան:

Կազմակերպությունը ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1313-Ն և 05.02.2015թ. N 86-Ա որոշումներով նշանակվել է համապատասխանաբար՝ սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)

Եվրասիական տնտեսական միության (մաքսային միության) միասնական ռեեստրի ազգային մասի ձևավորումն ու վարումն իրականացնող և Եվրասիական տնտեսական միության (մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության գնահատման փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասի ձևավորումն ու վարումն իրականացնող լիազոր մարմին: Ներկայումս ՀԱՄ-ն իրականացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016թ. մայիսի 10-ի N 38 և N 39 որոշումներով հաստատված տեխնոլոգիական փաստաթղթերին համապատասխան N 36 և N 35 ընդհանուր գործընթացներին միանալու աշխատանքներ:

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը (ARMNAB), որպես Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային մարմին, մասնակցում է ՄՊԽ-ի (ՄՊԽ-ն հանդիսանում է ԱՊՀ-ի միջկառավարական մարմին՝ տեխնիկական կանոնակարգման ոլորտում համաձայնեցված քաղաքականության ձևավորման և իրականացման հարցերով) հետևյալ գիտատեխնիկական հանձնաժողովի և աշխատանքային խմբի աշխատանքներին՝

- հավատարմագրման գիտատեխնիկական հանձնաժողով (HTKA),

- հավատարմագրման տարածաշրջանային կազմակերպության ստեղծման աշխատանքային խումբ (ՊԳ ՊՕԱ):

ԵԱՏՄ շրջանակում հավատարմագրման համագործակցությունն իրականացվում է ԵԱՏՄ Պայմանագրի հիման վրա՝

- «Տեխնիկական կանոնակարգում» X-րդ բաժնի 54-րդ հոդված «Հավատարմագրում»,

- № 9 հավելված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին արձանագրություն»,

- № 10 հավելված «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին արձանագրություն»,

- № 11 հավելված «Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքները ճանաչելու մասին արձանագրություն»:

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը (ARMNAB) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական միջոցների Տեխնիկական կանոնակարգման

Խորհրդատվական կոմիտեի տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ենթակոմիտե» աշխատանքային խմբի անդամ է:

2016 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը (ARMNAB) դարձել է Եվրոպական հավատարմագրման համագործակցության (EA)-ի ասոցացված անդամ և ստորագրել է անդամակցության համաձայնագիր, որն առաջին քայլն է հավատարմագրման արդյունքների փոխճանաչման բազմակողմ և երկկողմ ճանաչման համաձայնագրերի կնքման գործընթացում:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային, եվրոպական, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամպետությունների հավատարմագրման համակարգերին ինտեգրում, միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան հավատարմագրված և համապատասխան ռեեստրներում ներառված փորձարկման, տրամաչափարկման լաբորատորիաներ, արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմիններ, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմիններ և այլ համապատասխանության գնահատման մարմիններ, համապատասխան ռեեստրների վարում և արդիականցում, հավատարմագրման արդյունքների փոխճանաչման բազմակողմ և երկկողմ ճանաչման համաձայնագրերի կնքմանն ուղղված աշխատանքների նախապատրաստում, Եվրոպական հավատարմագրման համագործակցության (EA) և ԵԱՏՄ պարտավորությունների շրջանակում մասնակցություն աշխատաժողովներին, գագաթնաժողովներին, հանդիպումներին:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը, որպես հավատարմագրման ազգային մարմին, իր առաքելությունն իրականացնելու համար պետական բյուջեից ֆինանսավորվող գումարն ուղղելու է 5 աշխատակցի (4 աշխատակցինը ամբողջությամբ, 1 աշխատակցինը՝ մասամբ) աշխատավարձի ֆոնդին:

Նախահաշիվ 2020-2022թթ.
«Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին» ծրագրի ծախսերի

ՀՀ	Ծախսերի անվանումը	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1	Աշխատավարձ (5 մարդ)՝ ներառյալ ԱԱՀ	16680.0	16680.0	16680.0	16680.0
	Ընդամենը	16680.0	16680.0	16680.0	16680.0